վան վարդապետութեան յարութեանն։ Ածան յատեան խորհրդոյ 71 արանց Պետրոս և Յովհաննէս, և պատուիրեալ արձակեցին չխօսիլ յանուն Յիսուսի։ Այլ իբրեւ տակաւ յորդէր քրիստոնէութիւնն քարոզութեամբ Առաքելոց, միաբանեցին Փարիսեցիք և Սադուկեցիք հալածել առ հասարակ զեկեղեցին, որոյ սկիզբն քարկոծմամբ կատարեցաւ սուրբն Ստեփաննոս նախատարկաւագ՝ առաջին վկայ Աւետարանական օրինաց, որոյ սպանմանն կամակից էր և երիտասարդն Սաւուղ։ Թէպէտ և ցրուեցան հաւատացեալքն յերուսաղէմ բայ յԱռաքելոց, այլ տարածեցաւ Աւետարանն 'ի Հրէաստան, 'ի Սամարիա, յԱսորիս, 'ի Փիւնիկէ և 'ի Կիպրոս, ուր ընկալան զբանն կենաց։

Միաբանեալ Առաքելոցն ձեռնադրեցին զՅակոբոս արդարն և զեղբայրն Տեառն՝ առաջին եպիսկոպոս Աթոռոյն Երուսաղէմի (34)· յորմէ ակնածէին իսկ Հրէայքն վասն արդարութեան և զգօնութեան, որպէս գրէ և Եւսեբի վասն նորին· «Այր՝ որ զառաջին ընկալաւ զեպիսկոպոսութիւնն 'ի Փրկչէն մերմէ եւ յԱռաքելոց անտի զեկեղեցւոյն Երուսաղէմի, այն որ էր եղբայր Քրիստոսի, որպէս ասացեալ է 'ի գիրս· մինչեւ ցայսօր ժամանակի պահէն յարգեն եղբարք որ անդ են ըստ յաջորդութեան կարգի, և ցուցանեն յայտնապէս ամենայն մարդոյ, եթէ առաջինքն և եթէ որ մինչեւ ցայսօր ժամանակի թէ որպիսի պատուով ունէին զարս սուրբս սիրելիս Աստուծոյ»։ Պապ. Եկեղ. է. 18։ Առ սովաւ եղև առաջին ժողովն Առաքելոց և երիցանց յերուսաղէմ վասն խնդրոյն Անտիոքացւոց, և սահմանեցին չդնել լուծ նորադարձ հրէից և հեթանոսաց պահել զօրէնս Մովսէսի և Թլփատիլ։ Այլ ազդ արարին թղթով զգուշանալ 'ի պոռնկութենէ', 'ի զոհելոյ կուռց, և հեղձուցեալ կենդանեաց և յարենէ, և զայս յանձնարարին Յուդայի և Շիղայի տանիլ յԱնտիոք ընդ Պօղոսի և ընդ Բառնաբայ· (31)։ Այլ Կերինթոս՝ հերձնակ մոլորութեանն ոչ դադարէր աշակերտովքն յուղելոյ զհերձուածս 'ի քաղաքի անդ, և քարոզէին զթլփատութիւն եւ զպահպանութիւն օրինացն Մովսէսի։

Զկնի նահատակութեան առաքելոյն Թադէոսի 'ի հայս,